## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Իջևանի համայնքի ավագանու 2016թ ապրիլի 20 -ին կայացած նիստի

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Վ.Ղալումյան
քարտուղար՝ Բ.Թանանյան

Նիստին մասնակցում էին համայնքի ավագանու անդամներ՝ Արտակ Խաչատրյանը, Սամվել Չիբուխչյանը, Գրիգոր Ղանիեյանը, Մեսրոպ Մխիթարյան. Տիգրան Թամրազյան, Արսեն Հովակիմյան, Արման Ղալթախչյանը, Էմիլ Վարդապետյանը, Վարդան Օրդինյանը :

Նիստին հրավիրված և մասնակցում էին լրատվական միջոցների ներկայացուցիչներ, քաղաքապետարանի աշխատակիցներ, հիմնարկների և կազմակերպությունների ղեկավարներ, բնակիչներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*20 ապրիլի 2016թ. N 33*

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին օրենքի" 12-րդ հոդվածի պահանջներով

*Իջևան համայնքի ավագանին որոշում է*

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը

1. Համայնքի 2016թ. բյուջեի 1-ին եռամսյակի կատարման մասին հաղորդում
2. Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին
3. Համայնքում հանրային բաց լսումների և /կամ/ քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին
4. Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին
5. Իջևանի մշակույթի տան հաստիքացուցակում տնօրենի տեղակալի հաստիքը կրճատելու մասին
6. Քաղաքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում փոփոխություն կատարելու մասին
7. Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող Ազատամարտիկների փողոց 35 հասցեի 0.3 հա մակերեսով հողամասում ,,Տաշիր,, բարեգործական հիմնադրամի կողմից մանկապարտեզ կառուցելուն համաձայնություն տալու մասին
8. Քաղաքաշինական և այլ նպատակներով հողամասեր հատկացնելու, ինքնակամ շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու մասին
9. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխությանը հավանություն տալու մասին
10. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխությանը հավանություն տալու մասին
11. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխությանը հավանություն տալու մասին
12. Իջևան համայնքի 2016թ բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
13. Ալբերտ Ղալթախչյանին Իջևանի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ԱՐՄԱՆ ԴԱԼԹԱԽՉՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

# 1.ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

## ՀԱՂՈՐԴՈՒՄ

Իջևան համայնքի 2016թ. տարեկան բյուջեն առ 01.04.16թ դրությամբ եկամուտների մասով կատարվել է 23,6%, կամ նախատեսված տարեկան 512088,1 հազար դրամի դիմաց փաստացին կազմել է 119465,0 հազար դրամ:

Այդ նույն ժամանակաշրջանում սեփական եկամուտները կատարվել են 23,6% /նախատեսված 100000,0 հազար դիմաց փաստացին կազմել է 23606,6 հազար դրամ/:

Հարկային եկամուտները կատարվել են 26,6%, այդ թվում հողի հարկը՝ 34,4% գույքահարկը՝ 26,2%:

Ընդամենը տուրքերը կատարվել են 17,9%, այդ թվում պետական տուրքերը՝ 18,9%, տեղական տուրքերը՝ 17,2%:

Ընդամենը այլ տեղական վճարները կատարվել են 20,7%:

Համայնքային գույքի օտարման առաջադրանքը կատարվել է 18,1%:

Ընդամենը ծախսումները կատարվել են 22,8%, այդ թվում քաղաքապետարանի պահպանման ծախսերը կատարվել են 22,5%, կրթության բնագավառի ծախսերը կատարվել են 17.8%, մշակույթի և սպորտի բնագավառում 25,8%, սան. մաքրման և կոմունալ ծախսերը կատարվել են 25,0%:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
**Իջևան քաղաքային համայնքի ավագանի**
**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
*20 ապրիլի 2016թ. N 34*

2.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին, ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 34-րդ կետի և 54.1 հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 10.2 կետը և 33.1 -ին հոդվածը

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1.Հաստատել ,,Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը,, համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻՔՈՒԽՉՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
*20 ապրիլի 2016թ. N 35*

## 3.ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ /ԿԱՄ/ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 33.1 -ին հոդվածի 3-րդ կետով, 54.1 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 69-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով ,,Իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունները ,,Քաղաքաշինության մասին,, ՀՀ օրենքի 13 և 14 հոդվածները և ,,Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին,, ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 3-րդ կետը

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1.Հաստատել ,, Համայնքում հանրային բաց լսումների և /կամ/ քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը,, համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻՔՈՒԽՉՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
*20 ապրիլի 2016թ. N 36*

## 4.ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 10.1 հոդվածի, 16-րդ հոդվածի 33-րդ կետի, 20-րդ հոդվածի 3.2-րդ կետի, 30-րդ հոդվածի 6.1-ին կետի, 33.1-ին հոդվածի 1-4-րդ կետերի, ,,Քաղաքաշինության մասին,, ՀՀ օրենքի 12-14-րդ հոդվածների, ,,Իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի, ,,Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին,, ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան, ,,Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին,, ՀՀ օրենքը ,,Տեղեկատվության ազատության մասին,, ՀՀ օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ նոյեմբերի 19-ի ,,Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին,, թիվ 1325-Ն որոշումը.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է.*

1.Հաստատել ,, Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը,, համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻՔՈՒԽՉՅԱՆ կողմ | ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ կողմ | ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ կողմ |
| ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ կողմ | ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ |
| ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ կողմ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ |
| ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ կողմ | |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

*20 ապրիլի 2016թ. N 37*

## 5.ԻՋԵՎԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՀԱՍՏԻՔԸ ԿՐՃԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ անհրաժեշտություն է առաջացել Իջևանի մշակույթի տան հաստիքացուցակում կրճատել տնօրենի տեղակալի մեկ հաստիքը:

Ղեկավարվելով ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը Իջևանի մշակույթի տան հաստիքացուցակում ս/թ հունիսի 1-ից կրճատել տնօրենի տեղակալի մեկ հաստիքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻՔՈՒԽՉՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
*20 ապրիլի 2016թ. N 38*

## 6.ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 24-ի 164-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 3-րդ կետի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում ավելացնել Սպարտակ Եգանյանին.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է՝*

1. Համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմում ընդգրկել Սպարտակ Եգանյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի

# ՈՐՈՇՈՒՄ

*20 ապրիլի 2016թ. N 39*

## 7. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ 35 ՀԱՍՑԵԻ 0.3 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ,,ՏԱՇԻՐ,, ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել ,,Տաշիր,, բարեգործական հիմնադրամի տնօրինությունը նոր մանկապարտեզի շենքի կառուցման նպատակով 3000քմ հողատարածք հատկացնելու խնդրանքով:

Հաշվի առնելով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 25.12.2015թ ,,Տաշիր,, բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ,,Իջևան քաղաքում նոր մանկապարտեզի շենքի կառուցում,, ծրագրի մասին N Մ-1411-Ա որոշումն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է՝*

1. Տալ հավանություն Իջևան քաղաքի սեփականություն համարվող ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքի Ազատամարտիկների փողոցի 35 հասցեի 0.3հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասում նոր մանկապարտեզ կառուցելուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ
ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## Իջևան քաղաքային համայնքի ավագանի
## ՈՐՈՇՈՒՄ
*20 ապրիլի 2016թ. N 40*

### 8. ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ առաջարկություն են ներկայացվել Իջևան քաղաքի մի խումբ բնակիչների կողմից ինքնակամ կառուցված, ինչպես նաև ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու համար: Առաջարկություններ են ներկայացվել նաև քաղաքաշինական և այլ նպատակներով աճուրդային, մրցութային, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով առանց մրցույթի կառուցապատման իրավունքով հողամասեր հատկացնելու մասին:

*Իջևան համայնքի ավագանին որոշում է*

1.Տալ համաձայնություն ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ օգտագործվող հողամասերի իրավական կարգավիճակը որոշելու, քաղաքաշինական և այլ նպատակներով աճուրդային, մրցութային և ուղղակի կարգով հողամասեր հատկացնելու մասին առաջարկությանը համաձայն աղյուսակի

| հh | Նպատակը | Հասցե | Մակերեսը/քմ |
|---|---|---|---|
| 1 | Հասարակական կառուցապատում | Արցախյան փ. | 1.0 |
| 2 | Հասարակական կառուցապատում | Երևանյան փ. | 2x 1.0 |
| 3 | Հասարակական կառուցապատում | Մետաղագործների փ. | 84.0 |
| 4 | Հասարակական կառուցապատում | Մետաղագործների փ. | 19.8 |
| 5 | Հասարակական կառուցապատում | Վայանսի փ. | 42.8 |
| 6 | Հասարակական կառուցապատում | Ազատամարտիկների փ. | 45.0 |
| 7 | Հասարակական կառուցապատում | Ազատամարտիկների փ. | 48.0 |
| 8 | Բնակելի կառուցապատում | Բլբուլյան փ. | 33.6 |
| 9 | Բնակելի կառուցապատում | Բլբուլյան փ. | 2x 19.8 |
| 10 | Բնակելի կառուցապատում /ինքնակամ ավտոտնակ/ | Բլբուլյան փ. | 48.76հող/48.76շին |
| 11 | Բնակելի կառուցապատում | Սպանդարյան փ | 19.8 |
| 12 | Հասարակական կառուցապատում | Թատերական փ | 1447.4 |
| 13 | Բնակելի կառուցապատում | Ղարագյոզյան փ | 11x27,7 |
| 14 | Բնակելի կառուցապատում | Մետաղագործների փ. | 1553.7 |
| 15 | Հասարակական կառուցապատում | Սպանդարյան փ | 6x29,6 |
| 16 | Հասարակական կառուցապատում | Երևանյան փ | 19,8 |
| 17 | Հասարակական կառուցապատում | Արցախյան | 11,7 |
| 18 | Հասարակական կառուցապատում | Ուսանողական փ | 96,0 |
| 19 | Գյուղատնտեսական նշանակության հող | Երևանյան փ | 2800,0 |
| 20 | Գյուղատնտեսական նշանակության հող | Երևանյան փ | 5647,2 |
| 21 | Հասարակական կառուցապատում | Արցախյան փ. | 78.3 |
| 22 | Հասարակական կառուցապատում | Անկախության փ. | 19.5 |
| 23 | Հասարակական կառուցապատում | Ա.Մելիքբեկյան փ | 2x19.8 |

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ
ՍԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ կողմ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ կողմ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ կողմ

ԱՐՄԱՆ ԴԱԼԹԱԽՉՅԱՆ կողմ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ կողմ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱUՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## Իջևան քաղաքային համայնքի ավագանի
## ՈՐՈՇՈՒՄ

*20 ապրիլի 2016թ. N 41*

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

### 9.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող 0.06325հա մակերեսով հողամասը /11-001-0243-0001 ծածկագրով հողամասի մի մաս/ ՀՀ կառավարության 06.10.2005թ թի 2417-Ն որոշմամբ նշված հողամասը փոխանցվել է Իջևան համայնքին, որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամաս՝ գործառնական նշանակությունը այլ հողեր, և ՀՀ կառավարության 2006թ նոյեմբերի 30-ի թիվ 1720-Ն որոշմամբ հաստատված Իջևան քաղաքի գլխավոր հատակագծում նույնպես հողամասը նշված է որպես գյուղատնտեսական նպատակային նշանակության անօգտագործելի հողեր, և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի $14^3$ հոդվածի, ՀՀ 2011թ դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 17.1 կետի պահանջներով՝ ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի N 1064-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստում քննարկելու համար, ու համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է*

1. Տալ հավանություն ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխության նախագծին /գլխավոր հատակագիծ/՝

Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող 0.06325հա մակերեսով հողամասը /11-001-0243-0001 ծածկագրով հողամասի մի մաս/ գյուղատնտեսական նպատակային նշանակության /գործառնական նշանակությունը այլ հողեր/ հողամասերի կազմից հանելու և բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերի կազմի մեջ փոխադրելուն, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատում:

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ | ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ |
| ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ | ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ |
| ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ | ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ |
| ԱՐՄԱՆ ԴԱԼԹԱԽՉՅԱՆ | ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ |
| ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ | |

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
*20 ապրիլի 2016թ. N 42*

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

## 10.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող 0.00603հա մակերեսով հողամասը /11-001-0706-0001 ծածկագրով հողամասի մի մաս/ ՀՀ կառավարության 06.10.2005թ թի 2417-Ն որոշմամբ նշված հողամասը փոխանցվել է Իջևան համայնքին, որպես էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողամաս՝ գործառնական նշանակությունը մայրուղի և ՀՀ կառավարության 2006թ նոյեմբերի 30-ի թիվ 1720-Ն որոշմամբ հաստատված Իջևան քաղաքի գլխավոր հատակագծում նույնպես հողամասը նշված է որպես էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության հողեր, և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14$^3$ հոդվածի, ՀՀ 2011թ դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 17.1 կետի պահանջներով՝ ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի N 1064-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստում քննարկելու համար, ու համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է*

1. Տալ հավանություն ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխության նախագծին /գլխավոր հատակագիծ/՝

Իջևան համայնքի սեփականություն հանդիսացող 0.00603հա մակերեսով հողամասը /11-001-0706-0001 ծածկագրով հողամասի մի մաս/ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության /գործառնական նշանակությունը մայրուղի/ հողամասերի կազմից հանելու և բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերի կազմի մեջ փոխադրելուն, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻՐՈՒԽՉՅԱՆ կողմ
ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ
ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ կողմ
ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ կողմ
ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ կողմ
ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ
ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ կողմ
ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ
ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## Իջևան քաղաքային համայնքի ավագանի
## ՈՐՈՇՈՒՄ

*20 ապրիլի 2016թ. N 43*

ՆԱԽԱԳԻԾ

11.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ /ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ/ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

0.04հա մակերեսով
Հաշվի առնելով, որ Իջևան համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասում /11-001-0255-0001 ծածկագրով հողամասի մի մաս/ կառուցված է բնակելի տուն, իսկ նշված հողամասը ՀՀ կառավարության 06.10.2005թ թիվ 2417-Ն որոշմամբ համարվում է պետական սեփականություն հանդիսացող անտառային հողեր և ՀՀ կառավարության 2006թ նոյեմբերի 30-ի թիվ 1720-Ն որոշմամբ հաստատված Իջևան քաղաքի գլխավոր հատակագծում նույնպես հողամասը նշված է որպես անտառային հողեր, և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի, <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի $14^3$ հոդվածի, ՀՀ 2011թ դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման 17.1 կետի պահանջներով՝ ՀՀ վարչապետի 2009թ դեկտեմբերի 22-ի N 1064-Ն որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի նիստում քննարկելու համար, ու համայնքի ղեկավարի առաջարկությունը.

*Իջևան համայնքի ավագանին որոշում է*

1. Տալ հավանություն ՀՀ Տավուշի մարզի Իջևան քաղաքային համայնքի /բնակավայրերի/ գլխավոր հատակագծի փոփոխության նախագծին /գլխավոր հատակագիծ/՝ Իջևան համայնքի վարչական սահմաններում գտնվող 0.04հա մակերեսով հողամասը /11-001-0255-0001 ծածկագրով հողամասի մի մաս/ պետական սեփականություն հանդիսացող անտառային հողամասերի կազմից հանելու և բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերի կազմի մեջ փոխադրելուն, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՋԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ կողմ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ կողմ

ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ կողմ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ կողմ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
# ՈՐՈՇՈՒՄ
*20 ապրիլի 2016թ. N 44*

## 12. ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանին նշում է, որ ՀՀ կառավարության 2016թ. մարտի 31-ի թիվ 344-Ն որոշմամբ նվազագույն աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացման, ինչպես նաև 1974թ.-ից հետո ծնված նվազագույն աշխատավարձ ստացողների նպատակային սոցիալական վճարների հետ կապված 2016թ. առաջացող լրացուցիչ ծախսերը փոխհատուցելու նպատակով Իջևան համայնքային լրացուցիչ հատկացվել է 1096.8 հազար դրամ: Բացի այդ անհրաժեշտություն է առաջացել Իջևանի ՔԿԱԳ բաժնի պահպանման ծախսերում կատարել 70.0 հազար դրամ վերաբաշխումներ:

Ելնելով վերոնշյալից

*Իջևան համայնքի ավագանին որոշում է*

1. 2016թ. բյուջեի եկամտային և ծախսային մասը 1096.8 հազար դրամ:
Եկամտային մասում 1096.8 հազար դրամը ավելացնել 37.7 բաժնի 900375121119 հաշվին:
Վարչական բյուջեի ավելացված վերոնշյալ գումարից 150.0 հազար դրամ հատկացնել քաղաքապետարանի պահպանման ծախսերի 1.1. բաժնի 4212, հոդվածին, 150.0 հազար դրամ 4221, հոդվածին, 9.1.1. բաժնի հոդվածով թիվ 1 մանկապարտեզի պահպանման ծախսերին հատկացնել 130 հազար դրամ, թիվ 5 մանկապարտեզին 150.0 հազար դրամ, թիվ 8 մանկապարտեզին 120.0 հազար դրամ, 150.0 հազար դրամ մարզադպրոցին, 100.0 հազար "Ավանդույթին", 146,8 հազար դրամ "Իջևանի միջն. երաժշտական դպրոցին":
Իջևանի ՔԿԱԳ պահպանման ծախսերի 1.6.1 բաժնի 4269 հոդվածի I եռամսյակի գումարից 70,0 հազար դրամ տեղափոխել 4261 հոդվածի II եռամսյակ:
2. Հաստատել Իջևան համայնքի ճշտված բյուջեն 513184.9 հազար դրամ եռամսյակային 514256.7 հազար դրամ վարչական բյուջեի, 2090.5 հազար դրամ ֆոնդային բյուջեի ընդամենը 516347.2 հազար դրամ ծախսերի գծով: Բյուջեի դիֆիցիտը կազմում է 3162.3, որի ծածկմանն է ուղղվում 3162.3 հազար դրամ տարեսկզբի ազատ մնացորդը, այդ թվում 1071.8 վարչական, 2090.5 ֆոնդային բյուջեի մասով:

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ

ԱՐՄԱՆ ԴԱԼԹԱԽՉՅԱՆ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
Իջևան քաղաքային համայնքի ավագանի
ՈՐՈՇՈՒՄ
*20 ապրիլի 2016թ. N 45*

13. ԱԼԲԵՐՏ ՂԱԼԹԱԽՉՅԱՆԻՆ ԻՋԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի ավագանին նշում է, որ համայնքապետարան են դիմել Իջևան քաղաքի մի խումբ բնակիչներ՝ խնդրելով ավագանու նիստում քննարկել Ալբերտ Նիկոլայի Ղալթախչյանին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու հարցը:

Ալբերտ Ղալթախչյանը ունենալով էլեկտրոնային տեխնիկայի ինժեների որակավորում շուրջ 33 տարի աշխատել է Իջևանի էլցանցային շրջանում: Երկրի համար ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող բնագավառում՝ էներգահամակարգում նա զբաղեցրել է տարբեր պաշտոններ, որից 24-ը աշխատել է որպես «ՀԷՑ» ՓԲԸ «Աղստև» մասնաճյուղի տնօրեն: Լինելով իրեն վստահված գործի լավ գիտակ և հմուտ կազմակերպիչ Ալբերտ Ղալթախչյանը էներգետիկ ճգնաժամի տարիներին նվիրված աշխատանքով նպաստել է սահմանամերձ Տավուշի մարզում էլեկտրաէներգիայի անխափան մատակարարմանը:

Իր մատուցած ծառայությունների համար Ա. Ն. Ղալթախչյանը 2003թ. արժանացել է «ԱՊՀ երկրների վաստակավոր էներգետիկի» կոչմանը, 2005թ.՝ ՌԱՕ ԵԷՍ կոնցեռնի պատվոգրին: 2007թ. արժանացել է ավագույն տնօրեն «Դանկո» մրցանակին, նույն թվականին՝ ՀՀ վարչապետի հուշամեդալին:

Հաշվի առնելով վերոհիշյալը և ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 24-րդ կետով.

***Իջևան համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ հավանություն քաղաքապետի առաջարկությանը՝ Ալբերտ Նիկոլայի Ղալթախչյանին շնորհել Իջևան համայնքի պատվավոր քաղաքացու կոչում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

ՍԱՄՎԵԼ ՉԻԲՈՒԽՉՅԱՆ կողմ

ՄԵՍՐՈՊ ՄԽԻԹԱՐՅԱՆ կողմ

ՏԻԳՐԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆ կողմ

ԱՐՄԱՆ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ կողմ

ԱՐՍԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ կողմ

ԷՄԻԼ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ կողմ

ԱՐՏԱԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ կողմ

ԳՐԻԳՈՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ կողմ

ՎԱՐԴԱՆ ՕՐԴԻՆՅԱՆ կողմ

ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐԴԱՆ ՂԱԼՈՒՄՅԱՆ